

ՄԵԼԻՔՐԵԿՅԱՆ ՆԱԻՐԱ

*Հայաստանի ազգային գրադարանի
Գրադարանային գրիդ տեխնոլոգիաների
գիտահետազոտական կենտրոնի ղեկավար*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԸ
ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԼԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ**

Բանալի բառեր՝ գրադարանի կայքէջ, համացանց, թվայնացում
Keywords. The Library, Website, Internet, Digitization

XXI դարում գիրքը, որպես տեղեկատվության պահպանման և փոխանցման միջոց, չի կորցնում իր կարևորությունը և շարունակում է մնալ քաղաքակրթության զարգացման կարևոր գրավականներից մեկը: Ներկա ժամանակաշրջանում գրադարանները, հանդիսանալով տպագիր արտադրանքի սպասարկման և երկարաժամկետ պահպանման վայր, պետք է իրենց առօրյա աշխատանքում շեշտը դնեն նաև թվային տեխնոլոգիաների կիրառմանը: Ներկայումս գրադարանները տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից ընձեռած հնարավորությունների հիման վրա սկսել են մատուցել զանազան նոր ծառայություններ: Պատճառը գրադարանավարների ակտիվ դերակատարությունն է տեղեկատվական հասարակության կայացման գործում:

Ավտոմատացումը փոխեց ավանդական գրադարանի տեսքը ինչպես գրադարանավարի, այնպես էլ օգտվողի համար: Այստեղ է առաջանում գրադարանների կայքէջերի ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կծառայեն որպես հարթակ թվային գրադարանի այցելուների համար, և որի շնորհիվ այցելուները հասու կդառնան գրադարանի կողմից մատուցվող ծառայություններին: Այսօր գրադարանները՝ որպես տեղեկատվական կենտրոններ, ունեն զարգացման նոր հնարավորություններ, ուստի գրադարանային կայքէջը այս առումով մեծ դերակատարություն ունի:

Հայաստանի ազգային գրադարանի (ՀԱԳ) կայքէջը առաջին անգամ համացանցում ակտիվացվել է 2009 թ.: 2011 թ. առաջարկվեց կայքէջի նոր տարբերակը, իսկ 2016 թ. ընթերցողին ներկայացվեց կայքէջի նորացված տարբերակը, որում հաշվի են առնված տեխնոլոգիական արդի ձեռքբերումները: Կայքէջը նախորդի համեմատ ունի մի շարք առավելություններ՝

- **Ունի պարզ կառուցվածք.** հեշտ ընկալվող բաժիններ և հրամաններ, մաքուր և ընկալելի նախագծում, որը թույլ է տալիս առաջին անգամ մուտք գործած ընթերցողին միանգամից ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները:
- **Այն ոչ միայն արդիական է, այլև հարմար:**
- **Կայքէջը հասանելի է դյուրակիր թվային սարքերի համար** (խելացի հեռախոսներ, պլանշետներ, թվային գրքերի ընթերցիչներ և այլն): Նման սարքերը հնարավորություն են տալիս օգտվել համացանցից ցանկացած վայրում, ինչին իր հերթին մեծապես նպաստեց արագագործ անլար ցանցի զարգացումը: Այս պայմաններում գրադարանին անհրաժեշտ էր ունենալ իր կայքի այնպիսի տարբերակ, որը համատեղելի կլիներ նաև շարժուն (mobile) սարքերի համար: Կայքի միջերեսը և ցուցադրվող բաժինները հարմարվում են այդ կրիչների պաստառների չափսերին, և կայքից օգտվելը կամ ընթերցանությունը դառնում է ավելի հաճելի:
- **Ապահովված է կայքէջի համապատասխան անվտանգությունը.** ՀԱԳ- ի կայքէջը ունի բոլոր անհրաժեշտ պաշտպանիչ միջոցները՝ ծրագրահեղձների հարձակումներից պաշտպանվելու կամ ընթերցողի չմտածված գործողություններին դիմակայելու համար: Սրանք ապահովվում են բովանդակության կառավարման նորագույն համակարգի ներդրման շնորհիվ, որը կառավարում է ՀԱԳ- ի կայքէջը:

Կայքի կարևորագույն և առաջնային մաս է հանդիսանում գլխավոր էջը, որը Հայաստանի ազգային գրադարանի «կառույցի» ճակատն է, նախագծերի ցուցափեղկը: Այստեղ տեղադրվել են ամենակարևոր հղումները (միջոցառումներ, էլեկտրոնային նյութեր, նորություններ, ծառայություններ և այլն):

Նպատակի իրագործման համար ուսումնասիրվել են այլ կայքէջեր, տեսական և գործնական ձեռքբերումները: Ուշադրություն ենք դարձրել՝

- Գրադարանի կայքէջի ստեղծման առանձնահատկություններին:
- Կայքէջի՝ համացանցում մատչելիության ապահովման խնդիրներին և անխափան կազմակերպմանը:
- Կառուցվածքին, միջերեսին, էջերի բովանդակությանը:
- Սոցիալական ցանցերի հետ ճկուն կապին:

Ինչպես և ցանկացած կայք, գրադարանի կայքը ևս ունի իր առանձնահատկությունները: Սակայն մինչև այդ առանձնահատկություններին անցնելը դիտարկենք ինտերնետ-կայք հասկացությունը: Ի՞նչ է դա:

Կայքէջը որոշակի կազմակերպության, առանձին մարդու կամ մարդկանց խմբի ներկայացվածությունն է համացանցում: Եթե իրական կյանքում հիմնարկը նոր մասնաճյուղ բացելու համար կառուցում է նոր շենք, ստեղծում է ենթակառուցվածք (անցկացնում է էլ. հոսանք, ջուր), ապա վիրտուալ աշխարհում բացում է ինտերնետ-կայք, որի համար նույնպես անհրաժեշտ է հատուկ ենթակառուցվածք¹:

Ցանկացած ենթակառուցվածք դա համակարգ է: Տվյալ դեպքում՝ ծառայությունների և օբյեկտների համակարգ, որը նախատեսված է կայքի լիարժեք աշխատանքի համար: Որպես ծառայություններ հանդես են գալիս տեխնոլոգիաները, օրինակ՝ հետադարձ կապը, էլեկտրոնային փոստը և այլն, իսկ որպես օբյեկտներ՝ կոնկրետ տեխնոլոգիաների կիրառությունները, օրինակ՝ հետադարձ կապի ձևը:

Ենթակառուցվածքի հիմնական նպատակն է ապահովել կայքում տեղադրված պաշարների արդյունավետ օգտագործումը և տեսանելիության ապահովումը: Մասնավորապես, առանց մտածված և աշխատող նավարկման համակարգի օգտատիրոջը դժվար կլինի կողմնորոշվել կայքում:

Եթե այցելենք համաաշխարհային առաջատար գրադարանային կայքեր (Բրիտանական գրադարան, ԱՄՆ Կոնգրեսի գրադարան, Ֆրանսիայի ազգային գրադարան) կարելի է նկատել, որ չնայած նախագծի, կառուցվածքի տարբերություններին, դրանք ունեն շատ ընդհանուր գծեր, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև.

1. Պարզ կառուցվածք, որը թույլ է տալիս առաջին անգամ մուտք գործած ընթերցողին միանգամից ստանալ իրեն հետաքրքրող հիմնական հարցերի պատասխանները: Նա պետք է առանց դժվարությունների, առանց գուշակության հասկանա, որ գտնվում է նորությունների բաժնում և ոչ թե ընթերցողների ֆորումում:

2. Ենթակառուցվածք: Այն պետք է լինի ոչ միայն արդիական, այլև հարմար: Գրադարանային կայքի նախագծողը պետք է մանրակրկիտ մշակի տարբեր ծառայություններ՝ սկսած ճիշտ նախագծված և կառուցած նավարկությունից մինչև էլեկտրոնային քարտարանները, հետադարձ կապի ձևից մինչև անձնական կաբինետը և այլն: Կարևոր է ապահովել հետաքրքրությունների հավասարակշռություն ընթերցողի, նախագծողի և գրադարանի աշխատակազմի

¹ «Современная библиотека» Научно-практический журнал о библиотеках, чтении и книге № 4(44) /2014-Современные будни: Книгохранилища армянской книги(Тигран Заргарян/ директор Национальной библиотеки Армении, ст. 80-85):

միջև, քանի որ այս կամ այն ծառայությունների ներդրման ժամկետները և արժեքները կարող են լինել շատ մեծ: Այլ խոսքերով կայքը պետք է լինի հարմար և հասկանալի ոչ միայն օգտվողներին, այլև կայքի կառավարչին և խմբագրին:

3. Բովանդակությունը: Կայքը մշակելու ժամանակ այս հարցը պետք է լինի առաջնային: Յուրաքանչյուր պատվիրատու նախագծողի հետ միասին պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ «Իսկ ինչ ենք մենք ուզում տեսնել մեր կայքում (ավելի ճիշտ ինչ կուզեին այնտեղ տեսնել մեր ընթերցողները և ինչ կարող ենք մենք նրանց առաջարկել)»:

4. Գրադարանային կայքի աշխատանքի իրավական տեսանկյունը: Գոյություն չունի խիստ տարբերակում այն էլեկտրոնային նյութերի, որոնք գրադարանը ներկայացնում է համացանցի միջոցով և կայքի եզակի բովանդակության միջև (ֆոտոալբոմ, գրքերի նորույթներ և տեսություններ, վիրտուալ ցուցադրություններ): Բոլորն էլ թվային բովանդակություն են, սակայն հարցն այն է, որ այդ բովանդակությունը պետք է ներկայացվի հեղինակային իրավունքի նորմերի պահպանմամբ: Բոլոր սահմանափակումները (հեղինակային իրավունք, նյութի օգտագործման ժամկետ) պետք է խստորեն պահպանվեն: Բանն այն է, որ ընթերցողը ոչ թե պարզապես հեռավար կարողանում է ստանալ տեղեկատվություն, այլ նա գրադարանային ծառայության միջոցով *օրինական* տեղեկատվություն է ստանում: Սա է գրադարանային կայքի կարևոր տարբերությունը համացանցը հեղեղած էլեկտրոնային գրադարաններից, ֆայլային պահուստներից, որոնցում հեղինակային իրավունքի նորմերը կոպտորեն ոտնահարվում են:

5. Հանգույցները /պորտալները/²: Հանգույցը տեղեկատվության խոշոր կուտակիչ է, ուր միավորվում են առանձին կայքեր և ծառայություններ և որը օգտատերերին հնարավորություն է տալիս մեկ պատուհանի սկզբունքով օգտվել տարածապես բաշխված նյութերից: Ստեղծելով իրենց կայքէջերը համացանցում՝ գրադարանները հաճախակի ընտրում են պորտալային լուծման տարբերակը՝ որպես այլընտրանք սովորական կայքին: Դա կարող է լինել արդեն գոյություն ունեցող նախագիծ, որին գրադարանը միանում է որպես գործընկեր (օրինակ՝ europeana.eu) կամ սեփական հանգույցը (Հայաստանի գիտատեղեկատվական հանգույցը): Վերջինիս դեպքում գրադարանը հանդես է

² «Современная библиотека» Научно-практический журнал о библиотеках, чтении и книге № 4 (44) /2014-Современные будни: Книгохранилища армянской книги(Тигран Заргарян/ директор Национальной библиотеки Армении, ст. 80-85):

գալիս որպես հիմնադիր կամ համահիմնադիր, օրինակ՝ Նյու-Յորքի հանրային գրադարանի կայքը կամ Հարվարդի համալսարանի գրադարանի կայքը, կամ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի կայքը: Այս տարբերակը արդիական է խոշոր գրադարանների համար, որոնք ունեն մասնաճյուղերի լայն ցանց կամ դուստր կազմակերպություններ (տպարաններ, թանգարաններ):

Գրադարանային կայքի տեխնիկական մշակման մեջ հիմնական գործող անձը նա է, ով պատասխանատու է ողջ նախագծի համար, ինչպես նաև նախագծողի և պատվիրատուի, գրադարանավարի և դիզայների, միջերեսի ծրագրավորողի և կայքի խմբագիր-գրադարանավարի միջև փոխգործունեության համար և այլն: Ընդհանրապես նախագծի ղեկավարը համարվում է կապող օղակ բոլոր հետաքրքրված անձանց միջև: Այսպիսով, նախագծի հաջողությունը կամ անհաջողությունը կախված է գրագետ ղեկավարումից:

Մինչ նախագծի մշակումը, անհրաժեշտ է կատարողի հետ խորհրդակցելուց հետո կազմել մանրակրկիտ տեխնիկական առաջադրանք: Առանց բազմակողմանի մշակված տեխնիկական փաստաթղթավորման նախագիծը դատապարտված է ձախողման: Նախագծի մշակումը օգտակար է նաև պատվիրատուին, քանի որ դրա բացակայության դեպքում անհնարին է կազմակերպել արդյունավետ երկխոսություն կատարողի հետ, իսկ առանց փաստաթղթավորման ոչ մի կատարող չի զբաղվի նախագծմամբ:

Տեխնիկական առաջադրանքը պետք է ներառի հարցեր՝ կապված կայքի կառուցվածքի, դիզայնի, ծառայությունների, այլ տեխնիկական լուծումների հետ: Կողմերի իրավունքները և պարտականությունները, աշխատանքների կատարման ժամկետները, դրանց արժողությունը կազմվում են առանձին պայմանագրի տեսքով:

Կայքը մշակելու ընթացքում կարևորը կանգ չառնել նախորդ նախագծի արդեն ձեռք բերված փորձի վրա (սեփական և օտար): Տեխնոլոգիական նորարարությունները պետք է հիմնվեն առկա պաշարների վրա: Անհրաժեշտ է որպեսզի կայքի նախագծի քննարկմանը մասնակցեն հնարավորինս մեծ թվով հետաքրքրված անձիք. գրադարանի բաժնի վարիչներ, խմբագիրներ, տեղեկատու գրադարանավարներ և այլն:

Գրադարանային կայքը կարող է ընդլայնվել և թարմացվել՝ ստեղծելով նոր բաժիններ, օրինակ՝ էլեկտրոնային փաստաթղթերի շաբլոններ (ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, գրքային կատալոգներ և այլն) կամ զարգացնել

գրքի պատվիրման կամ ժամկետի երկարացման էլեկտրոնային ձևաթերթիկը (ավելացնելով ձևում նոր դաշտեր կամ «զանգ կայքից» հնարավորություն):

Վերջապես, ցանկացած կայքի կարևորագույն բաղկացուցիչ է հանդիսանում գլխավոր էջը: Գլխավոր էջը «կառույցի» շքամուտքն է, նախագծի ցուցափեղկը: Այստեղ պետք է տեղադրվեն ամենակարևոր հղումները: Կարելի է տեղադրել նաև որևէ գրաֆիկական լուծում (սլայդ-ցուցադրություն, պանորամային ֆոտո), որևէ նորություն գրադարանային կամ ընթերցողների կյանքից կամ գրադարանային ֆոնդից եզակի հրատարակությունների ցուցադրություն և այլն:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի համար կիրառվել են հետևյալ ծրագրա-տեխնիկական լուծումները. Ուբունտու Լինուքս օպերացիոն համակարգի վրա տեղադրված է Ապաչ վեբ-կայանը, ՊէյչՊ ծրագրավորման լեզվով իրականացվել են ծրագրավորման աշխատանքները, իսկ Մայեսթրուէլը ծառայում է որպես բովանդակության պահպանման և կառավարման համակարգ: Նաև տեղադրված է ծրագրային համակարգեր, որոնք ապահովում են կայանի անվտանգությունը՝ firewall, iptables, ip spoofing, ddos, deny host:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի պահանջվող մոդուլների նշանակությունը, կառուցվածքը և կիրառումը ունեն հետևյալ տեսքը՝ Web system CMS Drupal, թեման Impact Theme, front end user friendly, mobile version css: Դրուփալը կայքերի կառավարման համակարգ է: Դրուփալը բաց կոդով ազատ ծրագիր է: Բովանդակության կառավարման այս համակարգը հնարավորություն է տալիս ստեղծել տարբեր տիպի կայքեր՝ բլոգներ, ֆորումներ, նորությունների բլոկներ և այլն:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջում արտացոլված են գրադարանի գործառույթները: Թվային գրադարան ստեղծելիս կարևոր հանգամանք է օգտվողների պահանջների և կարիքների հաշվառումը: Պետք չէ առաջնորդվել «եկեք ստեղծենք և օգտվողներն իրենք կգան» սկզբունքով: Ընդհակառակը, անհրաժեշտ է հետազոտել և հասկանալ, թե ի՞նչ ակնկալիքներ ունեն օգտվողները թվային գրադարաններից, ի՞նչ տեսքով կցանկանային հաղորդակցվել բովանդակային շտեմարանների հետ, ծառայությունների ինչպիսի՞ ցանկ է հարկավոր նրանց, և վճարման ի՞նչ մեխանիզմներ են գործելու առօրյա աշխատանքի ընթացքում: Չնայած մոտեցումների ողջ բազմազանությանը, այնուամենայնիվ, թվային գրադարանների ստեղծման գործընթացը, թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն, զարգանում է լայն թափով:

Տարբեր էլեկտրոնային շտեմարանների, ինչպիսիք են «Հայ հնատիպ գրքի», «Հայ մամուլի» և այլ շտեմարանների ստեղծումը, կայքէջում համապատասխան հղումների տեղադրումը, հնարավորություն են ընձեռում հայ տպագիր ժառանգությունը հավուր պատշաճի ներկայացնելու ողջ աշխարհին:

Հայաստանի ազգային գրադարանը վաղուց հատել է պարզապես գիրք սպասարկող ավանդական գրադարանի սահմանը: Գրադարանը, լինելով *հիբրիդ*, իր մեջ ներառում է թե՛ ավանդական, թե՛ թվային պաշարներ, որոնք ամեն օր թարմացվում և շտկվում են միտված ընթերցողի գիտական և ընթերցողական պահանջների բավարարմանը: Նշենք, որ գրադարանը քայլում է ժամանակին համահունչ՝ գրադարանային ծառայությունները մատուցելով էլեկտրոնային տարբերակով: Ընդգծենք հատկապես ընթերցողների գրանցումը էլեկտրոնային ձևաչափով: Շուկայական գործունեության տեսանկյունից գրանցման համակարգը օգնում է ընթերցողներին առանց ժամանակ կորցնելու դառնալ գրադարանի օգտատերերից մեկը:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջը, հասանելի է www.nla.am հղումից: Այստեղ ընթերցողները կարող են ծանոթանալ գրադարանում թվայնացված տպագիր ժառանգությանը, էլեկտրոնային քարտարանին, նորություններին, միջոցառումներին, նվիրատվություններին, Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքին և կառավարության հաստատած կարգերին: Կայքէջի յուրաքանչյուր մաս ներառում է համապատասխան տեղեկատվությունը: Թվարկված բաժինները ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ ընթերցողի պահանջների առավելագույն բավարարմանը և նրանց աշխատանքի հեշտացմանն ու արագացմանը: Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի առանձնահատկություններից են՝

1. Միջերեսի բազմազանությունը,
2. Բազմալեզու բովանդակությունը,
3. Ներկայացվածությունը սոցիալական ցանցերում,
4. Կապը Վիկիպեդիա ազատ հանրագիտարանի հետ
5. Տեղեկատու, ուղղորդող և լրիվ տեքստային էլեկտրոնային շտեմարանների առկայությունը:

Կայքէջում առկա են հետևյալ հնարավորությունները՝ այցելությունների վիճակագրություն, հետադարձ կապ, RSS-ի արտահանում, որոնում «Համահավաք գրացուցակում», նորություններ, օգտատերերի կողմից նյութերի խմբագրում և այլն: Նշենք, որ կայքէջում առկա բազմազան ծառայությունները յուրահատուկ

գովազդային և մարքեթինգային առաջարկ են ընթերցողական լսարանի համար: Մեր կարծիքով, այն իր մեջ ընդգրկում է ինտերնետ-գովազդի, սոցիալական մեդիայի մարքեթինգի, որոնողական առաջխաղացման բոլոր բաղադրիչները և ապահովում՝ մաքսիմալ արդյունք:

Ներկայացնենք կայքէջի առաջնաէջում ներառված ամենապահանջված ծառայությունները՝

- Հանրային թվային գրադարան
- Մուտք Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ
- Գրանցման կարգը
- Տեղեկություններ գրադարանի աշխատանքային ժամերի մասին
- Նորություններ
- Հայտարարություն
- Նվիրատվություններ
- Հասցե

Հանրային թվային գրադարան-ի ներքո ներկայացված են թվային գրադարանին բնորոշ էլեկտրոնային պաշարները՝ էլեկտրոնային քարտարաններ, մատենագիտական-տեղեկատու շտեմարաններ, լրիվ տեքստային նյութերի շտեմարաններ: Այստեղ կարելի է ծանոթանալ գրադարանում թվայնացված տպագիր ժառանգությանը: Ազգային գրադարանում տեղադրված են արդյունաբերական հզոր տեսաձրիչներ: Հենց դրանց միջոցով իրականացվում է թվայնացումը: Թվայնացված նյութերը հասու են դառնում համացանցում մետատվյալների հետ միասին, մատենագիտական տվյալների համար բացառապես օգտագործվում են Բաց/Ազատ կոդերով ծրագրային լուծումները:

Գրադարանային կայքէջը սերտորեն կապված է սոցիալական ցանցերի հետ: Սոցիալական ցանցը առցանց ծառայություն է, որը միավորում է մարդկանց համացանցում որևէ հատկանիշի հիման վրա, սովորաբար ըստ հետաքրքրությունների³: Սոցիալական ցանցերի առավելություններն են՝

- Վստահության բարձր մակարդակը, որը ավելի բարձր է պաշտոնական աղբյուրների նկատմամբ:
- Արագ կապի միջոց, առաջին ձեռքից տեղեկատվություն ստանալու հնարավորություն և ցանկացած հարցերին պատասխան ստանալու հնարավորություն:

³https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D6%81%D5%A1%D5%B6%D6%81 -Վիքիպեդիա. Ազատ հանրագիտարան:

- Կապի բազմաթիվ միջոցներից օգտվելու հնարավորություն (տեքստ, ձայն, շարժում, պատկեր և այլն):

Գրադարանի վարվելաձևը սոցիալական ցանցերում պետք է կայանա հետևյալում՝

- Ելնելով գրադարանի ընդհանուր ռազմավարությունից, որոշել նրա ներկայության խնդիրները և նպատակները:
- Ձևավորել խումբ, որը կգբաղվի դրանով՝ մասնագիտական մակարդակով:
- Գրանցել գրադարանավարներին համապատասխան սոցիալական ցանցերում (Դիմերես (Facebook), Թվիտեր (Twitter), որոնք առավելագույնս համապատասխանում են նրա գործունեությանը:
- Գտնել խումբ գրադարանին համապատասխան նպատակային ընթերցողներով, օգտագործելով սոցիալական ցանցի փնտրման համակարգը:
- Ընդլայնել աշխատանքը այդ հարթակներում անցնելով պասիվ դիտարկումից դեպի ակտիվ քննարկումների և դառնալով բովանդակության գեներատոր:

Գրադարանի հիմնական նպատակը սոցիալական ցանցերում ընթերցողներին ավելի մոտիկ և հասանելի լինելն է: Ըստ հարցումների՝ գրադարանային էջի ամենաարդիական բաժինը հարցերի բաժինն է, ուր հաճախորդները տեղեկանում են այս կամ այն գրքի առկայության մասին, կարող են ճշտել տեղեկատվությունը գրադարանավարից կամ պարզապես իմանալ գրադարանի հասցեն:

Շատ կարևոր է, որ գրադարանի կայքէջը դառնա ավելի ինտերակտիվ: Դա նշանակում է բլոգների ստեղծման համակարգի ներդրում, առցանց քննարկումների, մրցույթների, միջոցառումների և հարցումների կազմակերպում:

Ընթերցողը պետք է հնարավորություն ունենա ստեղծել իր անձնական բլոգը իր գաղտնաբառով: Բլոգը հնարավորություն է տալիս ընթերցողին գրառումներ թողնել էջի վրա, ներբեռնել նկարներ, տեսաֆայլեր և այլն: Բլոգը պետք է ունենա գրառումների հասանելիությունը կարգավորելու հնարավորություն, այսինքն՝ բաց, փակ կամ կիսաբաց: Ընթերցողները կարող են կիսվել իրենց գրառումներով: Բլոգները կարող են ունենալ նաև թեմատիկ ուղղվածություն՝ միավորելով մարդկանց տարբեր հետաքրքիր գաղափարների շուրջ⁴:

⁴ <http://www.unkniga.ru/biblioteki/bibdelo/1733-budushee-elekt-bibliotek-filosofiya.html> Տեղեկատվական- վերլուծական ամսագրի պաշտոնական էջ:

Գրադարանի կայքէջում կարող են կազմակերպվել քննարկումներ որևէ գրքի, հեղինակի կամ թեմայի վերաբերյալ: Օրինակ՝ կայքէջում տեղադրվում է հայտարարություն, ուր նշվում է, որ որոշ ժամանակ անց կանցկացվի տվյալ գրքի քննարկումը: Այնուհետև այդ օրը և նշված ժամին անցկացվում է բաց քննարկում և կարծիքների փոխանակում: Մրցույթները կարող են կազմակերպվել հետևյալ սկզբունքներով՝ ծանոթանալ որևէ թեմայի, ընթերցել որևէ հեղինակի ստեղծագործություն որոշակի ժամանակահատվածում, այնուհետև ըստ պահանջների որոշել հաղթողին կամ հաղթողներին և բաշխել մրցանակները: Միջոցառումները կարող են ունենալ ուսուցողական, ծանուցողական բնույթ՝ բավարարելու տարբեր ընթերցողական խմբերի հետաքրքրությունները և պահանջները: Հարցումները անհրաժեշտ են՝ գրադարանի, գրքերի կամ տարաբնույթ թեմաների վերաբերյալ ընթերցողների կարծիքներն իմանալու համար: Հարցումը կողմնորոշող միջոց է գրադարանի համար՝ ռազմավարական պլաններ մշակելու հարցում:

Բացի սեփական ինտերակտիվ հնարավորությունների զարգացումից և օգտագործումից, գրադարանը կարող է նաև հանդես գալ որպես գիտական, մշակութային օղակ⁵: Օրինակ՝ գրադարանը կարող է ունենալ «Գրադարանային միջոցառումներ» և «Մասնագիտական ռեսուրսներ», որտեղ կարող են ներկայացված լինել Հանրապետությունում տարվա ընթացքում անցկացվող հիմնական գրադարանային միջոցառումները և հղումներ գրադարանների տեղեկատվական ռեսուրսներին, մեթոդական միավորումներին, մասնագիտական գրականությանը: «Համացանցի ռեսուրսները» բաժնում կարող են ներկայացված լինել ենթաբաժիններ՝ «Լրիվ տեքստային տվյալների բազաներ», «Արտասահմանյան գրադարանների քարտարաններ», «Հայրենական գրադարանների քարտարաններ», «Էլեկտրոնային գրադարաններ» և այլն: «Համալրում» բաժնում ներկայացված են ոչ միայն համալրվող գրքերի, ամսագրերի, էլեկտրոնային տեղեկատվական ցուցակները, այլև աղբյուրների, հրատարակչությունների, նվիրատուների կոնտակտային տվյալները և էլեկտրոնային հասցեները: «Մասնագիտական բաժին» հատվածը գրադարանավարների համար մտքերի, փորձի, գաղափարների փոխանակման հարթակ է: Այստեղ կարող են անցկացվել սեմինարներ, միջոցառումներ, հանդիպումներ գրադարանավարների համար: Ընդգծենք, որ նշված գործառույթներից շատերն արդեն իրականացվում են:

⁵ <http://www.library.ru/3/focus/ebook.php>-Ինֆորմացիոն-տեղեկատվական հանգույց՝ նախատեսված երիտասարդների համար:

Ներկայումս բազմաթիվ մարդկանց համար գրադարան հասկացությունը ասոցացվում է ոչ թե գրքեր տրամադրող հաստատության հետ, այլ գիտելիքի որոնման ագրեգացված հանգույցի հետ, կազմված տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններից:

Անշուշտ, ապագայում գրադարան հասկացությունը էլ ավելի կփոխվի: Դասական տիպի գրադարանը կպահպանվի որպես ավանդական, բայց կփոխի իր դերակատարությունը: Ելնելով այս պնդումից՝ մեր դասակարգումը կբաժանվի երկու մեծ խմբի. վիրտուալ էլեկտրոնային գրադարանների զարգացման հեռանկարները և ավանդական գրադարանների զարգացման հեռանկարները.

SUMMARY

Creating and editing a website of the National Library of Armenia was a complex and important process that consisted of several stages, each of which contained very important tools and informations. Each stage was coordinated information building, links, web editing, and more.

In 2016 we have set ourselves a task to present a new website for the public, that differs from the others, has a simple structure, easy-to-understand sections and commands, a clean and perceptible design, allowing the first-time entering reader to get answers to the questions that interest him. The library needed to have the so-called mobile version of its website, so that the site could be accessed on any electronic carrier. The website is available for portable digital devices (smart phones, tablets, digital readers, etc.).